Հավելված 2
2025թ. «01» «21»-ին
Կնքված N ԴՏՊ-1160-11012/ԼԿ-6/25 պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N ԴՏՊ-1160-11012/ԼԿ-6/25

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը՝** | Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում. Ստեփանավան |
| **Դրամաշնորհի N** | N ԴՏՊ-1160-11012/ԼԿ-6/25 |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակատված** | 01.01.2025 – 31.12.2025 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.01.2025 – 31.12.2025 |
| **Ներկայացման օր** | 05.02.2026 |
| **Հաշվետվության պատասխանատու** | Սվետլանա Հարությունյան<br>Ծրագրի համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների շրջանակներում կատարման ենթական գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար**

| |
|---|
| **Միջոցառում 1.** Շահառուների ընդունելության կազմակերպում բազմամասնագիտական թիմի կողմից, կարիքների բազմակողմանի գնահատում ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ:<br>**Միջոցառում 2.** Գնահատման արդյունքում սոցիալ-վերականգնողական անհատական և խմբային ծրագրերի կազմում:<br>**Միջոցառում 3.** Սոցիալ-հոգեբանական վերականգմանն ուղղված ծառայությունների տրամադրում:<br>**Միջոցառում 4.** Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտություններ զարգացնող խմբակներում:<br>**Միջոցառում 5.** Հանրային միջոցառումներ և ԶԼՄ լուսաբանում:<br>**Միջոցառում 6.** Անկախ կյանքի դրական ծնողավարման վերաբերյալ թրեյնինգներ, սեմինարներ երիտասարդների և նրանց ընտանիքների համար:<br>**Միջոցառում 7.** Իրավաբանական խորհրդատեղեկատվական աջակցություն ընտանիքներին առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ:<br>**Միջոցառում 8.** Ազատ ժամանցի և մշակութային միջոցառումների կազմակերպում:<br>**Միջոցառում 9.** Ծրագրի մշտադիտարկում և գնահատում:<br>**Միջոցառում 10.** Շահառուների 7-օրյա ամառային հանգիստ «Լիարժեք կյանք» ամառային ներառական ճամբարում |

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի /Գանտի աղյուսակ/ և միջոցառումներ, նշելով՝ Ձեր կողմից կատարված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար:**

**Միջոցառում 1.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 1/ իրականացվել է շահառուների ընդունելության կազմակերպում և բազմամասնագիտական թիմի կողմից կարիքների բազմակողմանի գնահատում՝ ԱՀԿ ՖՄԳ մեթոդաբանությամբ, որի արդյունքում իրականացվել է թվով **52** շահառուի կարիքների գնահատում: Գործողությունը 1-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 2.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 2/ անձի կարիքների բազմակողմանի գնահատման արդյունքում բազմամասնագիտական թիմի կողմից կազմվել է թվով **52** սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր: Գործողություն 2-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 3.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 3/-ի թվով 52 շահառուի տրամադրվել է սոցիալ-հոգեբանական ծառայություններ՝ խմբային և անհատական պարապմունքների միջոցով, նպատակ հետապնդելով զարգացնել շահառուների մոտ ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցման և շարժողական հմտությունները: Գործողություն 3-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 4.** Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են արտթերապևտիկ տարբեր խմբակներ, որոնց նպատակն է զարգացնել ստեղծագործական ընդունակությունները, բարձրացնել ինքնագնահատականը, զարգացնել մանր մոտորիկան, զարգացնել թիմում աշխատելու, միմյանց օգնելու կարողությունը: Գործողություն 4-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 5.**

- 19.01.2025 թ-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի շահառուները այցելել են Ստեփան Շահումյանի անվան տուն-թանգարան և դիտել Հ. Թումանյանի «Անբան Հուռին» հեքիաթի մոտիվներով ստեղծված մուլտֆիլմը: Մասնակիցների թիվ՝ 20:
- 01.06.2025թ -ին կենտրոնի շահառուները մասնակցեցին հունիսի 1-ին նվիրված համաքաղաքային միջոցառմանը: Երեխաները ակտիվ մասնակցեցին ինչպես քաղաքապետարանի կողմից կազմակերպված միջոցառումներին, այնպես էլ «Լիարժեք կյանք» ՀԿ-ի կողմից կազմակերպած խաղերին և խեցեգործության վարպետաց դասին: Մասնակցիների թիվը՝ 20:
- 06.06.2025 թ-ին կենտրոնի շահառուները մասնակցեցին ՀՀ Կենտրոնական բանկի և Ստեփանավանի Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատի հետ համատեղ կազմակերպված ցուցահանդեսին նվիրված Հայաստանի դրամաշրջանառությանը և դրամի ստեղծման պատմությանը: Մասնակիցների թիվ՝ 18:
- 30.07.2025թ -ին կենտրոնի շահառուները մասնակցեցին ք. Սպիտակում ՀԱՄԱ-ՀՄԸՄ-ԱԿԱՆ 12-րդ մարզախաղերի մաս կազմող «ՀՐԱՇՔ» մարզախաղերին: Երեխաները ակտիվ մասնակցեցին կազմակերպված մրցումներին և միջոցառումներին, արժանացան շքանշանների և մեդալների, իսկ ավարտին երեխաները դիտեցին «Կարմիր Գլխարկ» տիկնիկային ներկայացումը: Մասնակիցների թիվ՝ 12:
- 03.12.2024 «Լիարժեք կյանք» ՀԿ-ում կազմակերպվել է միջոցառում նվիրված Հաշմանդամության միջազգային օրվան: Կենտրոնի սաները միջոցառմանը ներկայացան ձեռքի աշխատանքների ցուցահանդեսով, միջոցառման ավարտին

լավագույն աշխատանքներ ներկայացրած 20 երեխա արժանացան պատվոգրերի և խրախուսական մրցանակների:

Գործողություն 5-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 6.** Հաշվետու ժամանակահատվածում շահառուների ընտանիքի անդամների համար կազմակերպվել են հետևյալ սեմինարները՝

- Թեմա՝ «Զարգացնող պարապմունքների կազմակերպման և անցկացման մանկավարժական ժամանակակից մոտեցումները»: Դասընթացը վարեց, կենտրոնի լոգոպեդ՝ Վերոնիկա Հարությունյանը:
- Թեմա՝ «Ինչպես արդյունավետ արձագանքել երեխայի անցանկալի վարքին»: Դասընթացը վարեց, սոցիալական աշխատող՝ Անի Զաքարյանը:
- Թեմա՝ «Աուտիզմ, առաջացման պատճառները, միջամտության ուղիները»: Դասընթացը վարեց, լոգոպեդ՝ Հասմիկ Բաղդասարյանը:
- Թեմա՝ «Ճգնաժամային տարիքները և դրանց հաղթահարման ուղիները»: Դասընթացը վարեց, հոգեբան՝ Տանյա Աղաբեկյանը:
- Թեմա՝ «Խաղերի տեսակները և դրանց ազդեցությունը երեխայի զարգացման վրա»: Դասընթացը վարեց, կենտրոնի լոգոպեդ՝ Վերոնիկա Հարությունյանը:
- Թեմա՝ «Ծնողավարման ազդեցությունը երեխայի ներաշխարհի ձևավորման վրա»: Դասընթացը վարեց, սոցիալական աշխատող՝ Անի Զաքարյանը:
- Թեմա՝ «Հոգեկան զարգացման հապաղում»: Դասընթացը վարեց, լոգոպեդ՝ Հասմիկ Բաղդասարյանը:
- Թեմա՝ «Ծնող-երեխա Փոխհարաբերությունների կառուցվածքը»: Դասընթացը վարեց, հոգեբան՝ Տանյա Աղաբեկյանը:
- Թեմա՝ «Մեր իրավունքն է ապրել բռնությունից զերծ հասարակությունում», վարող, կենտրոնի հոգեբան՝ Տանյա Աղաբեկյան:
- Թեմա՝ «Խաղը և նրանց դերը երեխայի զարգացման գործընթացում»: Վարող, կենտրոնի հատուկ մանկավարժ՝ Վերոնիկա Հարությունյան:
- Թեմա՝ «Վնասակար սովորույթներ: Ինչպես նվազեցնել դրանք» վարող, կենտրոնի սոցիալական աշխատող՝ Անի Զաքարյան:
- Թեմա՝ «Մանկական ուղեղային կաթված, լոգոպեդական աշխատանքի կարևորությունը» վարող, կենտրոնի լոգոպեդ՝ Հասմիկ Բաղդասարյան:
- Թեմա՝ «Խոսքային նեգատիվիզմ» վարող. կենտրոնի լոգոպեդ Ռեգինա Բաբաջանյան:
- Թեմա՝ «Սկոլիոզ, ֆիզիկական ակտիվության կարևորությունը», վարող՝ կենտրոնի կինեզիստ՝ Լուսինե Ավետիսյան:
- Թեմա՝ «Հոգեբանի աշխատանքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար», վարող, կենտրոնի հոգեբան՝ Ելենա Շահնազարյան:
- Թեմա՝ «Ընտանեկան միջավայրի դերակատարությունը հաշմանդամություն ունեցող երեխայի զարգացման գործընթացում»: Վարող, կենտրոնի հատուկ մանկավարժ՝ Վերոնիկա Հարությունյան:
- Թեմա՝ «Ծնողների ազդեցությունը երեխայի սոցիալ-հոգեբանական ձևավորման վրա» վարող, կենտրոնի սոցիալական աշխատող՝ Անի Զաքարյան:
- Թեմա՝ «Սխալ կծվածք, տեսակները, ազդեցությունը երեխայի խոսքի վրա», վարող. կենտրոնի լոգոպեդ Ռեգինա Բաբաջանյան:
- Թեմա՝ «Մկանային ատրոֆիա», վարող՝ կենտրոնի կինեզիստ՝ Լուսինե Ավետիսյան:

Գործողություն 6-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 7.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 7/ հաշվետու ժամանակահատվածում թվով 46 քաղաքացու տրամադրվել է սոցիալ-իրավական, առողջապահական խնդիրներին առընչվող, պետական հավաստագրով աջակցող սարքեր

և պարագաների ձեռք բերման և այլ խնդիրներին վերաբերյալ աջակցություն և խորհրդատվություն: Գործողությունը 7-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 8.**

- 19.03.2025 թ-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի շահառուները այցելել են Ստեփան Շահումյանի անվան տուն-թանգարան և մասնակցել հայ ժողովրդական նվագարաններին նվիրված միջոցառմանը, ծանոթացել քանոնի պատմությանը, հայտնի քանոնահարների կյանքին և ստեղծագործությանը, ունկնդրել քանոնահարների ելույթները:
- 13.06.2025 կենտրոնի շահառուները մասնակցեցին «Կողք Կողքի» ներառական երաժշտական փառատոնին, որը տեղի ունեցավ Ստեփանավանի Արթուր Ղարիբյանի անվան արվեստի դպրոցում:
- 12.07.2025 կենտրոնի շահառուները մասնակցեցին Ստեփանավան համայնքի քաղաքային այգում կազմակերպված տոնական միջոցառումներին նվիրված Երիտասարդների օրվան: Միջոցառման ընթացքում երեխաները մասնակցեցին ազգային պարերի վարպետաց դասերին, ինտելեկտուալ և ինտերակտիվ խաղերին, կավագործության վարպետաց դասին և այլն:
- 30.07.2025թ-ին կենտրոնի շահառուները մասնակցեցին Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատում կազմակերպված «Վարդանանց Հետնորդներ» խորագիրը կրող փողային նվագախմբի հոբելյանական համերգին:

Գործողություն 8-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 9.** Իրականացվել է գնահատում (ծրագրի 3,4, 9, 12-րդ ամիսների ավարտին) և գնահատման պատկերը հաստատական դրական է: Իրականացված գնահատման արդյունքում հստակ և պարզ դարձավ, որ Ծրագիրը միանշանակ աջակցում է շահառուներին, այդ են վկայում հարցված շահառուների 92.5 % մոտ արձանագրված կարողությունների և անկախ կյանքի հմտությունների աճը և գոհունակությունը՝ ստացած ծառայություններից: Գործողություն 9-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 10.** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի թվով 6 շահառուներ իրենց 7-օրյա ամառային հանգիստն են անցկացրել Ստեփանավանի «Լիարժեք կյանք» ամառային ներառական ճամբարում: Գործողություն 10-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝**

Ստորև ներկայացվում է Ստեփանավանի կենտրոնի ամենօրյա աշխատանքները լուսաբանող ֆեյսբուքյան խմբի հղումը https://www.facebook.com/groups/738413854220041

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը**

Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ չեն առաջացել:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար**

1. 07.02.2025, 30.04.2025, 20.06.2025, 30.06.2025 03.10.2025, 01.12.2025 և 24.12.2025թթ. կենտրոնի համակարգող Անի Զաքարյանը մասնակցել է Միասնական սոցիալական ծառայության Ստեփանավանի տարածքային կենտրոնի համակարգող խորհրդի նիստերին:
2. 27.02.2025 թ-ին կենտրոնի հոգեբան Տանյա Աղաբեկյանը մասնակցել է «ՁԳՏՈՒՄ ավելի լավ ապագայի. համայնքների և քաղաքացիական հասարակության դիմակայունություն Հայաստանում» (STRIVE) ծրագրի կողմից կազմակերպված
3. 16-17.05.2025 թ-ին կենտրոնի հոգեբան Տանյա Աղաբեկյանը մասնակցել է «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմանդրամի կողմից կազմակերպված «Բարելավելով հոգեբանական ծառայությունները ՀՀ-ում տեղահանված և մարգինալացված խմբերի համար» վերապատրաստումների առաջին փուլին:
4. 23-25.06. 2025թ. ծրագրի համակարգող Սվետլանա Հարությունյանը մասնակցել է «Երեխայի լավագույն շահի գնահատման և որոշման ընթացակարգերը» լրացուցիչ կրթական ծրագրով նախատեսված վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացին:
5. 28-29.08.2025 թ-ին կենտրոնի հոգեբան Տանյա Աղաբեկյանը մասնակցել է «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմանդրամի կողմից կազմակերպված «Բարելավելով հոգեբանական ծառայությունները ՀՀ-ում տեղահանված և մարգինալացված խմբերի համար» վերապատրաստումների երկրորդ փուլին:
6. 05-06.07.2025 թ կենտրոնի լոգոպեդ Ռեգինա Բաբաջանյանը մասնակցել է «Ձայնային կամուրջ» ՀԿ -ի կողմից կազմակերպված «Դասական և զոնդերով լոգոպեդական մերսումը խոսքային խանգարումների շտկման համար» թեմայով դասընթացի:
7. 23-24.11.2025 թ-ին կենտրոնի հոգեբան Տանյա Աղաբեկյանը մասնակցել է «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմանդրամի կողմից կազմակերպված «Բարելավելով հոգեբանական ծառայությունները ՀՀ-ում տեղահանված և մարգինալացված խմբերի համար» վերապատրաստումների երկրորդ փուլին:
8. 30.11.2025թ կենտրոնի սոցիալական աշխատող Անի Զաքարյանը մասնակցել է «Դեմոկրատիան Այսօր» ՀԿ-ի կողմից կազմակերպած «Անդրադառնալով կանանց դեմ բռնությանը հետկոնֆլիկտային Հայաստանում» թեմայով սեմինարին:

Ծրագրի համակարգող՝ Ս. Հարությունյան

«Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ Ս. Մաղաքյան

2026-02-05 17:47:06 GMT+04:00
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից